

նշաններով: Մինչև անգամ կը հաւաքէին հրացանի զնդակներն՝ բժժանքներ շինելու համար: Եթէ զնդակը զինուոր մը սպաննած ըլլար, զոտողին համար մեծայարգ դասու մը կ'ըլլար, իսկ եթէ միայն վիրաւորած ըլլար, անոր արժէքը նուազ էր: Ընդհակառակն պահպանելու կարողութեանէ զուրկ կը համարուէին ռուբլի և շրաքանկի կտորները, և զինուորները կը բաւականանային իբր յիշատակ բարեկամներուն և ազգականներուն զրկելով:

Պատերազմի դաշտէն հեռու ալ քիչ շատ նոյն բանը կը պատահէր: Օդային ուժակոծութեան ժամանակ Բարիզի փողոցները կը ծախէին բախտ բերող փողեր մետալ մը, որ երկու ապակիներու մէջ կը պաւտանկէր զեղնորակ լաթի կամ կուտաւ բերգայի կտոր մը: Պողոտաներու մէջ զանոնք ծախողներու հաւատումին համեմատ թէ՛ մին և թէ՛ միւս կտորը կը պահէին ուժակոծութենէ: Իսկ որոնք որ տեղեկութիւն ուզէին կտորներուն այդ ունեցած զօրութեան վրայ, իրենց կը բացատրուէր թէ զեղնորակ լաթի կտորը գերմանական սաւառնակի կտակէն էր, իսկ կուղաբերգայի կտորը օդապարիկէն: Բնականաբար այս փողերիկ առևտուրը շատ մարդիկ հարստացուց: Մարդկային նանրապաշտութիւնը ամէն ինչ կրնայ կարելի ընել:

* * *

ՊՈԴԼԿԱՐԱՆԱՅՈՑ ՏԱՊԱՆԱԳԻՐՆԵՐԸ

Տիար Յ. Գիւրտեան զովքի ռուսոյով ժամանակէ մ'ի վեր կը հրատարակէ ազգային գերեզմանատուներու մէջ գտած ու կորսուելու դատապարտուած տապանագիրները, որոնք արդարեւ թանկագին նիւթեր կը պարունակեն Ազգ. պատմութեան համար:

«Բազմալէզ»-ի ապրիլ ամսաթիւին մէջ գերեզմանէր Զիւլիպէի և Ալտոսի, Պուրկազ և Սօֆիա գտնուած Հայ տապանագիրները, և աւտոնց կարգին՝ յիշած էր թէ Զիւլիպէի Ս. Գէորգ եկեղեցւոյ թուղթերուն մէջ գտած է հրատարակածներուն 48 և 50րդ:

Այս վերջինը՝ կը փութամ յայտնել՝ թէ կը պատկանի Իսկիւտար Սեւմիէի Ս. Խաչ եկեղեցւոյ հիմնադիր Տէր Աբրահամ Քանանային, որ կը հանգչի եկեղեցւոյ պարտէզը:

Սխալ և պակասաւոր ընդօրինակութիւն մ'է Տիար Յ. Գիւրտեանի այս հրատարակածը, որուն ճիշդ ու ամբողջականն է հետեւեալը:

Որ վասն. անչափ. սիրով. քոյիս Բանդ կուտէ. առեր. մարմին Բեւեռեցար. կենաց. փայտին Շիրիմս. այս. հարկ. հողային Մեծաւ. պատուով. եղաւ. մարմին Աղալանօք. սրբոյ. խաչ-ին Մաղթեա. ով. սուրբ Աստուածած-ին թողուլ. զմեզս. անձանց սորին Տր. Աբրահամ Քանանային եկեղեցւոյս. յոգնեալստին Զի. հողով. չափ. այս սուրբ խաչին Ախաւ. եղեւ. լուսահոգին Որք. ընթեռնուք. յօտարագին լիով. սրտով. դուք. զողորմին Հազար. հարիւր. եօթանասին Վեցում, եղեւ. վախճան սորին Որք. հանդիպիմք. ի տապանիս Ասել պարտիմք. հայր մեր երկինս.

ՌՃՀԶ.

Սոյն տապանագիրը հրատարակած է արդէն Տ. Հմայեակ Քանանայ Լքսէրման, Ս. Խաչ եկեղեցւոյ հաստատութեան Երկարիւրամեակին առթիւ զրի առած Հատորիկին մէջ:

Տէր Աբրահամ Քանանայի քովը թաղուած է՝ 1730ին իւր երիցուհին, որ ունի տապանագիր: Փարիզ

ՏՈՒՔ. ՎԱՐՍԱ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ

— ❦ —

ԳՐԱԽՈՍՄԱԿԱՆ

ՀԱՄԱՍՏԵՂԻ «ԱԶԶՐԵԻ»-Ի ԱՌԹԻԻ՝

Երբ ուզենք խօսիլ Համաստեղի նոր հրատարակած «Ազգեր»-ի վրան, մենք ստիպուած կ'ըլլանք և անդրադառնալ աւտորին «Գիւղ»-ի մասին: Երկու հատոր, երկու անուն, բայց մէկ գրքը, մէկ հոգի, մէկ սիրտ: «Ազգեր» կոչումը պատահմամբ է. որովհետեւ առաջին վիպակը այդ վերնագրեր կը կրէ: Մինչդեռ նոյն Գիւղն է, որ կը կազմէ և երկրորդ գրքին էութիւնը:

Ազգերի վիպակներէն ոմանք արդէն ինձ ծանօթ էին զանազան հանդէսներու միջո-

1. Հրատարակութիւն Imp. de NAYRIT. 5 Rue des Gobelins-Paris XIII. Մարտի Թղթի վրայ, մարդարապաշար զբոսով, նման «Վիւրը» հատորին, 227 էջով, կը պարունակէ ԺԲ. վիպակներ.